



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

Geographical Society of London


[ 7r

9(47.925)

9-42

1909

1909



ՀՐԵՏԵՐԵԿՈՒԹՅԻՆ ՄԵՆՈՒՉԵՐ ԿՆԵԳԵՆՏԻ

ԿՎԻՐ-ՀԱՎԿՆԵՐԿ

# ՊԱՏՄԵԿԱՆ ՔԱՂԻԱԾՆԵՐ

(Արտատպում «Հովիտ» ճարտարերից)

Պրակ ստաջին

Յովսէփ Կաթողիկոս Արղութեան.

Կ Ա Չ Մ Ե Յ

Եղիշէ ա. ք. Գեղամեանց

## Историческія выписки

(Перепечатано изъ журнала „Ховивъ“ (Пастырь)

Католикосъ Іосифъ Аргутянъ.

Ч. I. Сост. прот. Е. Гегамянцъ.

БАКУ

Типографія Н. А. Эриванцова.

1 9 0 9.

447130127

05 SEP 2011

19 AUG 2006

ՀՐԾՏԱՆՎՈՒԹՅՈՒՆ ՄԸՆՈՒԶԵՐ ՈՒՆԳԵՆՑԻ

91 (47.925)

9-424

# ՊԵՄԱԿԱՆ ՔԱՂԻՄՆԵՐ


(Արտատպում «Հովիտ» ամսագրերից)

Պրակ արաջին

Յովսէփի կաթողիկոս Արղութեան.

Կ Ա Ձ Մ Ե Յ

Եղիշէ ա. ք. Գեղամեանց




514

9-

Բ Ա Գ Ո Ւ

Տպարան Ն. Ա. Երևանցեանի.

1909.



5112  
52445

## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Բարեյիշատակ Մկրտիչ Ա. կաթողիկոսի մահւան առթիւ, որ տեղի ունեցաւ 1907 թւի հոկտեմբերի 29-ին, ես ձեռնարկեցի սոյն պատմական քաղաածներն կազմելու՝ նպատակ ունենալով ժողովրդին ծանօթացնելու այն պատմական իրականութեան հետ, որի մէջ կատարել է ամենայն հայոց կաթողիկոսների ընտրութիւնը՝ սկսած 1800 թւականից մինչև մեր օրերը:

Գրքոյկիս վերնագիրը ինքը արդէն ցոյց է տալիս, որ այս աշխատութիւնը իմ սեպհականը չէ, այլ պատմութեանը, որից քաղաածներ անելով՝ ես միմիայն լուսարանել և որոշ սխտեմի եմ վերածել պատմական այդ տեղեկութիւնները:

Աղբիւրների անուանները, նրանց երեսներն ու էջերը միշտ և ամեն անգամ լուսանցքների վրայ ցոյց տալու պարտաւորութիւնից ես խուսափեցայ՝

չծանրաբեռներու համար գրւածս, որ յատկացրած է գլխաւորապէս ժողովրդի ընթերցանութեան համար, որի աչքում յիշեալ ծանօթութիւնները իսկապէս նըշանակութիւն չունին:

Այդ կարգի բազմաթիւ ծանօթութիւններից խուսափելով հանդերձ, ես, այնուամենայնիւ, յառաջաբաններում ամեն անգամ, մի առ մի, յիշատակում եմ այն գլխաւոր աղբիւրները, որոնցից կազմւած է ըզլւածներիս մէն մի պրակը:

Սոյն առաջի պրակի աղբիւրներն են՝

1) Քուշներեան. պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց. Վենետիկ, 1895.

2) Լէօ. Յովսէփ կաթողիկոս Արղութեան. Թիֆլիզ, 1902.

3) Երիցեանց. Ամենայն Հայոց Կաթողիկոսութիւնը և Կովկասի հայք XIX դարում, հատ. Ա. Թիֆլիզ, 1894.

4) Աղանեանց. Դիւան հայոց պատմութեան գիրք ա. դ. և ե. Թիֆլիզ.

5) Акты Кавказ. Археогр. Комисіи, т. I. Թիֆլիզ.

6. Дубровинъ. Закавказье отъ 1802—1806 года, С. Пб. 1866.

7) Аксаковъ. Собрание актовъ относящихся къ обозрѣнію исторіи армянскаго народа. Москва, 1863.

8) Бутковъ. Матеріалы по исторіи Кавказа, С. Пб. 1869.

Եղիշէ ա. ֆ. Կեղամեանց.

30 յունվարի 1909.

Բագու

Ա.

ԺԸ դարու վերջալուսին, այն է 1799 թը-  
ւականի դեկտեմբերի 27-ին, Ղուկաս կաթողի-  
կոսը վախճանեցաւ:

Ս. Էջմիածինը այդ ժամանակ պարսիկների  
տիրապետութեան տակն էր:

Մայր Աթոռի միաբանութիւնը և Արարատ-  
եան աշխարհի առաջնակարգ աշխարհականները,  
ինչպէս որ ժամանակի սովորութիւնն էր, ան-  
միջապէս ձեռնարկեցին հանգուցեալ հայրապե-  
տի յաջորդի ընտրութեանը:

Ընտրուեցան Երևանցի Դանիէլ եպիսկոպո-  
սը, որ այդ ժամանակ տաճկահայերի պատրի-  
արքն էր և Նփրեմ եպիսկոպոսը, որ նւիրակու-  
թեան պաշտօնով Ռուսաստան էր գնացել:

Ընտրական թերթը Շուլաւերցի Գաւիթ ե-  
պիսկոպոսի միջոցաւ 1800 թւականի յունւարի  
16-ին Պոլիս ուղարկուեցաւ, որպէս զի այնտեղի  
հայերի հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչնե-  
րը՝ յիշեալ թեկնածուներից մէկին ընտրեն կա-  
թողիկոս և Սուլթանի հրովարտակով հաստատել  
տալով՝ ուղարկեն Էջմիածին, որտեղ նա կստա-  
նար և պարսից Շահի հրովարտակը:

Կարգը, սովորութիւնը այդպէս էր այն ժա-  
մանակ:

Պօլսում Դանիէլը վերընտրուեցաւ և հաս-  
տատուեցաւ:

Եւ նախ քան էջմիածին մեկնելը, նրա ան-  
ւան յիշատակութիւնը սկսուեցաւ եկեղեցիներ-  
ուով:

Պօլսոյ մայր եկեղեցում առաջին անգամ  
յիշատակեց ինքը՝ թղթատար Դաւիթ եպիսկո-  
պոսը:

Սակայն Դանիէլին վիճակած չէր էջմիա-  
ծին գնալու և կաթողիկոսական գահը բարձրա-  
նալու:

Ընդհակառակը ազգի նորընտիր հայրապե-  
տը զոհ գնաց այն քաղաքականութեանը, որ ա-  
ռաջիև անգամ մուտք էր գործում հայ լուսա-  
ւորչական եկեղեցւոյ ներքին գործերումը:

Եւ այդ քաղաքականութիւնը հայերին տի-  
րապետող պետութիւնների տյն է՝ օսմանցիների  
և պարսիկների՝ քաղաքականութիւնը չէր, այլ  
բոլորովին օտար մի այլ պետութեան:

Ռուսական պետութիւնն էր դա:

Բ.

Ճշմարիտ է, ռուսական կառավարութիւնը  
հայերի հետ յարաբերութեան մէջ էր մտել շատ  
վաղ, տակաւին մի դար առաջ:

Սակայն այդ յարաբերութիւնը հարևանցօ-  
րէն էր, կողմնակի, կրաւորական, ճիշտ ասած,  
նախապատրաստական:

Ղուկաս կաթողիկոսի մահւանից յետոյ՝  
Ռուս կառավարութիւնը առաջիև անգամ ձեռ-  
նարկեց ազգուսպէս և ուղղակի, ներգործական  
գեր խաղալ Արարատեան հայերի և նրանց Մայր

Աթոռի ներքին գործերումը և անպատրակ կեր-  
պով առաջ մղել իւր քաղաքական հաշիւները:  
Եւ ինչպէս կը տեսնենք, փայլուն յաջողութիւն  
ունեցաւ:

Դեռ Ղուկաս կաթողիկոսը կենդանի էր, որ  
Ռուս կառավարութիւնը Մայր Աթոռի վահի հա-  
մար՝ իւր յատուկ թեկնածուն ունէր: Դա Ար-  
ղութեան Յովսէփ եպիսկոպոսն էր, — ռուսահայ-  
երի առաջնորդը:

Վրաց Գէօրգի թագաւորի միջոցաւ՝ Ռուս  
կառավարութիւնը Յովսէփ եպիսկոպոսին հրա-  
հանգել էր կազմ և պատրաստ լինելու, որպէս-  
զի հէնց որ Ղուկաս կաթողիկոսը վաղճանի, ին-  
քը աճապարի էջմիածին հասնել՝ կաթողիկոսա-  
կան գահը պաշտպանելու, ճիշտը՝ կորզելու հա-  
մար:

Հաւանական է, որ էջմիածինը տեղեակ էր  
այս քաղաքական դաւին: Ուստի և փութացրեց  
հանգուցեալ հայրապետի յաջորդի ընտրութիւնը,  
որի ժամանակ նոյն իսկ Յովսէփի անունն առա-  
ջարկող մի անձ ևս գտնուեցաւ:

Բայց ժողովրդականները նրան լռեցրին՝  
յայտնելով Յովսէփ Արղութեանին անյարմարու-  
թիւնը և վտանգաւորութիւնը Մայր Աթոռի և  
առհասարակ Արարատեան հայերի համար, որոնք  
հպատակ լինելով օսմանցիներին և պարսիկնե-  
րին, չէին կարող կաթողիկոսական գահի վրայ  
բազմացնել մի եպիսկոպոսի, որ իւր կեանքի  
մեծագոյն մասը անց էր կացրել ռուսական գոր-

քերի՝ օսմանցիների և պարսիկների դէմ պատե-  
րագմ մղող՝ բանակների մէջ:

Յովսէփի Արղութեանին կաթողիկոս ընտրելն՝  
հայ ազգի համար համահաւասար էր տիրապե-  
տող երկու տէրութիւններին՝ Տաճկաց և Պարսից՝  
դէմ պատերազմ հրատարակելուն:

Այդ էր ահա պատճառը, որ էջմիածնի ըն-  
տրական ժողովում Յովսէփի թեկնածութիւնը  
գնոց ձայնը լռեց: Բայց այդ ձայնի քամակին  
կանգնած էր ոյժը, բռնութիւնը, որ չլռեց և ո-  
րին անգոր էր միաբանութիւնը յաղթահարելու:  
Գ.

Երբ Ղուկասի մահւան և գրեթէ միաժամա-  
նակ նրա յաջորդի ընտրութեան լուրը Թիֆլիս  
հասաւ՝ Վրաց Գէօրգի թագաւորը՝ Ռուս կառա-  
վարութեան ներկայացուցիչ ժեներալ Լազրեփի  
թելադրութեամբ՝ կողմնակի կերպով ազդարարեց  
էջմիածնին, թէ քանի որ Յովսէփի Արղութեանը  
կայ՝ մէկ ուրիշը չէ կարող կաթողիկոս լինել:  
Իսկ եթէ միաբանութիւնը ուրիշին ընտրէ, — ըն-  
տրւածը արգելքի տակ կը դրւի և Յովսէփի Ար-  
ղութեան ուղղակի կաթողիկոս կը կարգւի:

Այս ազդարարութեամբ ևս չառականանա-  
լով Գէօրգի թագաւորը մի յատուկ պատգամա-  
ւորութիւն ևս հասցրեց ձեռաց էջմիածին:

Պատգամաւորութեանը գլուխ կանգնած էր  
Վրաց արքայորդի Դաւիթը, իսկ անդամները՝  
Թիֆլիսի մի քանի ազգեցիկ աշխարհական հայ-  
երն էին:

Արդ՝ թէ Թիֆլիսից եկած գրաւոր ազդա-  
րարութեան և թէ էջմիածին ժամանած այս  
պատգամաւորութեան բունն ճնշման տակ՝ մի-  
աբանութիւնը և երկրի աշխարհական ներկայա-  
ցուցիչները ստիպւած եղան մի երկրորդ համա-  
խօսական թերթ ես կազմել, որի մէջ Դանիէլի  
վրայ աւելացրին նաև Յովսէփի եպիսկոպոսի ա-  
նունը: Եւ թուղթը շտապով հասցրին Դաւիթ ե-  
պիսկոպոսին, որ դեռ ճանապարհուսն էր և որը  
երկու ընտրական թերթերն ևս միաժամանակ  
տարաւ տեղ հասցրեց:

Բայց Պօլսոյ հայերը հասկացան, թէ բանը  
ինչուսն է. համոզւեցան, որ առաջին թերթը  
գրուած է ընտրողների ազատ կամքով, իսկ եր-  
կրորդը «ի թռնուրթենի թռնառորաց»: Ուստի և  
բացարձակ կերպով, ինչպէս վերևում ասեցինք,  
վերընտրեցին Դանիէլին, հաստատել տւին և ի  
պաշտօնէ ամենայն Հայոց կաթողիկոս հրատա-  
րակեցին նրան:

Այս հանգամանքը, հարկաւ, դիւր չեկաւ  
Ռուս կառավարութեանը, ոչ էլ նրա թեկնածու  
Յովսէփի եպիսկոպոսին:

Ուստի նրանք գինւեցան Պօլսոյ հայ իշ-  
խանների դէմ մասնաւորապէս:  
Դ.

Պօլսոյ պատրիարքին և ամիրաններին ուղ-  
ղած գրութիւններումը Յովսէփի եպիսկոպոսը  
թէպէտ և գրում էր, որ ինքը առանց նրանց և  
առհասարակ առանց ազգի ընտրութեանը չէ

ցանկանում կաթողիկոսանալ, սակայն Ռուսաստանից ուղարկած և Պօլսում ճարած իւր հոգևորական և աշխարհական ազենաների միջոցաւ չէր դադարում քարոզելուց և տարածելուց, որ եթէ ինքը չը ընտրւի, «սուրբ Աթոռը հրով կը ծախուի»: Թէ հայերի կողմից մեծ յիմարութիւն է, ռուսաց կայսեր «հօր հրամանին» ընդդիմանալ, թէ թագաւոր կայսրը լսելով, որ ինքը էջմիածնում արդէն կաթողիկոսացու է ընտրուել, «ահա պատրաստի մեծաւ շքով առաքել զիսանդ»:

Թէ „Նորին կայսրական Մեծութիւնն ամենաողորմած թագաւորն սուրհանդակ առաքեաց Պօլիս առ դեսպանն, ծանուցանել պատրիարքին և իշխանաց չնաւարձակել զոք հանել յայն ասիճակն (կաթողիկոսութեան) և երէ արարեալ իցեն՝ յեսս կոչել“\*):

Ե.

Ռուսաց դեսպանը այդ ժամանակ Վասիլ Ստեպանիչ Տամարան էր, որին արդարև, Պետերբուրգից հրամայւած էր ամեն միջոց ի գործ դնել Դանիէլի կաթողիկոսութիւնը խափանելու և Յովսէփի՝ ինչպէս ընտրութիւնը, նոյնպէս և հաստատութիւնն անպատճառ ի գլուխ բերելու:

Հրամայւած էր նաև Թիֆլիսի կուսակալ Կավալենսկուն, որ սա էլ, իւր հերթում, էջմիածնի միաբանութեան և ռուսահայերի վրայ պարտ ու պատշաճ ներգործութիւն ունենայ ինչպէս ուղղակի, նոյնպէս և Վրաց թագաւորի

\*) Դիւան հայոց պատմ .գիրք Ե. Կր. 30—32:

միջոցաւ, յօգուտ Յովսէփի կաթողիկոսանալուն:

Այս ամեն յայտնի ու գաղտնի բուռն աշխատանքները իզուր չանցան, մանաւանդ որ մէջտեղում փող էլ էր խաղում:

Ռուսաց դեսպանը մի կողմից և Յովսէփի ազենաներն ու կուսակիցները միւս կողմից պառակտում և իրարանցում ձգեցին Պօլսոյ հայերի մէջ:

Վերջ յամենայնի Տամարան մեծ վեզիրին իւր կողմը որսաց և Դանիէլին աքսորել տալով նրա հակառակորդ և Յովսէփի կուսակից Յովհաննէս եպիսկոպոսին Պօլսոյ պատրիարք կարգել տւեց:

Դանիէլի աքսորմամբ՝ նրա կուսակիցները ընկճւեցին, լռեցին, լռելու ստիպւեցին:

Եւ անա այդ լուրի մէջ Յովսէփ եպիսկոպոս Արղութեանը Պօլսոյ հայերի կողմից ընտրւելով և Օսմանեան ու Ռուսական ինքնակալների հրովարտակներովը ամենայն Հայոց կաթողիկոս հաստատուելով՝ շտեմնւած շքեղութեամբ և հանդիսաւորութեամբ Ռուսաստանից Թիֆլիս ժամանեց էջմիածին իւր պաշտօնավայրը գնալու:

Սակայն մեկնելու նախընթաց օրերից մէկում բաղնիս գնաց, տաք ջրում երկար մնաց. դուրս գալուց էլ մրսեցաւ, հիւանդացաւ, անկողին մտաւ և 1801 թւականի մարտի 9-ին կնքեց իւր մահկանացուն:

Զ.

Դառնանք այն բանին, թէ Ռուս կառավա-

րութիւնը ինչ նպատակաւ ուզում էր Արարատեան Մայր Աթոռի հայրապետական գահի վրայ անպատճառ Յովսէփ Արղունթեանին բազմեցնել:

Այդ նպատակի ինչ լինելն լրիւ հասկանալու համար, ընթերցող, մենք պէտք է փոքր ինչ շեղենք մեր բուն հարցից:

Յայտնի է, թէ Մեծն Պետրոսը ինչ խոշոր քաղաքական ծրագիր ունէր Ասիայի նկատմամբ:

Նրա ծրագրի մէջ մտնում էր, ի միջի այլոց, նաև Կասպից և Սև ծովերին տէր դառնալն:

Դէպի Կասպիական ծովն նրա գործած արշաւանքներն և դրանց յաջողացնելու նպատակաւ հայերին պարսից դէմ գոգոռելն, նրանց գանազան խոռուստներ տալն, նրանց իրանց հայրենիքից տեղահան անելն,—արդէն յայտնի է:

Մեծ աշխարհակալի մահւամբ նրա ծրագիրները չտապալւեցան, այլ նրանց գործադրութիւնը թողնւեցաւ նրա յաջորդներին:

Վերջիններիս միջին էլ Մեծն Կատարինէին էր վիճակւած իւր ձեռքերը տարածել Սև ծովի վրայ և նրա մի մասին տիրանալ:

Այդ մասը Խրիմի թերակղզին էր:  
է.

Թերակղզին այդ ժամանակ մի ինքնավար թաթարական երկիր էր օսմանեան պետութեան բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ:

Թերակղզու ազգաբնակչութեան տնտեսական և բարոյական բարօրութիւնը պատրւակ բռնելով Կատարինէ կայսրունին յաջողեցաւ օսմանեան վեհապետական իրաւունքները գինու գո-

րութեամբ խլել և Խրիմը թաթարական անկախ, ինքնուրոյն խանութիւն հրատարակել:

Շատ շանցաւ կայսրունու ներկայացուցիչը, իշխան Պօտեօմկինը, խանութեան մէջ երկպառակութիւն սերմանալով՝ ազգաբնակչութիւնը երկու կուսակցութեան բաժանեց,— ուսական կուսակցութիւն և թիւրքական կուսակցութիւն:

Այնուհետև թիւրք կուսակցութեան պարագլխին Թիւրքիա փախցնելով՝ զինուորների սինների օգնութեամբ ուսական կուսակցութեան պարագլուխ Շահէն-Գիրէին ամբողջ թերակղզու խան հրատարակեց:

Մի քիչ յետոյ էլ Պօտեօմկինը թերակղզում մի այնպիսի դրութիւն առաջ բերեց արևեստականօրէն, որ Շահէն-Գիրէի խանութիւնը մազից կախւած մնաց և շուտով յօգս ցնդեցաւ:

Դրութիւնը այս էր:  
Ը.

Հարաւային Ռուսաստանի Ազովի և Դոնի ափերն զրեթէ անմարդաբնակ և անմշակ էին մնացել: Հարկաւոր էր մարդիկներ բնակեցնել այդ տեղերում, մշակել, զարգացնել նրանց:

Այդպիսի նպատակի համար ամենաընդունակ անիական ժողովուրդներից մէկն էլ՝ հայ ժողովուրդն է եղել:

Այս բանը քաջ յայտնի էր Ռուս կառավարութեանը:

Ուստի Պետերբուրգի Արքունիքի և Պօտեօմկինի մէջ միտք ծագեց՝ Խրիմ թերակղզու

քրիստոնեայ ազգաբնակութիւնը գաղթեցնել Ա-  
զովի և Դօնի ափերը:

Սրանով ո՞չ միայն յիշեալ երկիրը կը մշակ-  
ւէր, կը շէնանար, այլ նաև Խրիմ թերակղզին  
իւր տշխատասէր քրիստոնեայ ազգաբնակութիւ-  
նիցը զրկւելով, առժամանակ մի կ'ամայանար,  
կ'աղքատանար, կ'անանկանար:

Եւ այնուհետև Շահէն-Գիրէի խանը ստիպ-  
ւած կը լինէր, եթէ ոչ փողով՝ անշուշտ զօռով  
ձեռք քաշել իւր կարծեցեալ անկախութիւնից:  
Եւ թերակղզին ռուսական հզօր Դշխօյի ոտքերի  
տակը սփռել:

Այդպէս էլ եղաւ:

Թ.

Խրիմի ազգաբնակութեան մէջ այդ ժամա-  
նակ 30,000-ի չափ քրիստոնեայ ժողովուրդ  
կար, կիսից աւելի հայ, մնացածը յոյն:

Հայերը Անիից գաղթողների սերունդն էին,  
որ մօտ 400 տարի թերակղզում ապրելով՝ իրանց  
համար խիստ բարեկեցիկ վիճակ էին ստեղծել,  
տուն ու տեղ եղել, կայք ու ստացւած ձեռք  
բերել, արհեստների և վաճառականութեան մէջ  
ծաղկել, առաջ գնացել:

Եւ ինչպէս սկզբումը Ջէնովացիների, նոյն-  
պէս և վերջերումը Օսմանեան Սուլթանների և  
թերակղզու թաթարական Խաների համակրանքը  
և խնամքը գրաւել, վայելել:

Հայերի վիճակից պակաս նախանձելի չէր  
յոյների վիճակն ևս:

Բայց... մի գեղեցիկ օր ազգաբնակութեան  
մէջ յանկարծ մի շուկ է ընկնում՝ իբր թէ թե-  
րակղզու մահմեդական ազգաբնակութիւնը կազ-  
մող թաթարները, վճռել են քրիստոնեայ տար-  
րին կոտորել, սրի անցկացնել:

Քրիստոնեայ ժողովրդին ահ և երկիւղ պա-  
տեց, որից մեծապէս օգտւեցան շինծու լուրի  
տարածող գրգռիչներն, — պրօփօկատօրներն, — իշ-  
խան Պօտեօմկիւնի ազենաներն:

Ամեն մի հողմից շարժւող ամբոխը, նա, որ  
իւր ուղեղը աչքերումն ու ականջներումն ունի,  
բնական է, որ իւր աչքերը դէպի ռուս քրիստո-  
նեայ պետութիւնը ուղղէր:


Եւ Խրիմի քրիստոնեայ ժողովուրդը իշխան  
Պօտեօմկիւնեն ապաւինեց:

Նամանաւանդ, որ առ այդ՝ քրիստոնեայ  
ամբոխին թելադրում, յայտնի և զաղտնի խոր-  
հուրդներ էին տալիս յոյներին՝ նրանց միտրօպօ-  
լիտը, Իգնատիոս անունով և հայերին՝ նրանց ա-  
ռաջնորդը՝ Պետրոս անունով: Նոյնպէս և կաթո-  
լիկ հայերի առաջնորդը՝ Յակոբ անունով մի քա-  
հանայ:

Պէտք է գիտենալ, որ այդ սևագլուխները  
մի այդպիսի ծառայութեան համար Պօտեօմկի-  
նից նախօրօք աջահամբոյր էին ստացել միտրօ-  
պօլիտը՝ 6550 ռուբլի, Պետրոս վարդապետը՝  
2820 ռուբլի և Յակոբ քահանան՝ 1250 ռուբլի:

Մի և նոյն ժամանակ նրանց խոստացւած  
էր ցմառ առաջնորդութիւն իրանց հօտերի վրայ:

1005  
29145



ժ.

Պօտեօմկինի ծրագրին, այն է թերակղզուց գաղթելուն, յոյները շուտ համակերպւեցան, հայերը, ընդհակառակը ոչ:

Վերջիններս կուսակցութեան բաժանւեցան, — գաղթել ցանկացողներ և չցանկացողներ:

Ցանկացողների թիւը շատ սակաւ էր, որոնք և յոյների հետ միացան:

Իսկ չցանկացողները, որ մեծամասնութիւն էին կազմում, Շահէն-Յիրէին ղիմեցին և բանի էութիւնը նրան հասկացնելով խնդրեցին պաշտպանել իրանց և չթոյլ տալ, որ բռնութեամբ իրանց տեղահան անեն:

Խանը ղիմեց Սուվօրօվին, որ ռուսական զօրքերի տեղական գլխաւորն էր. ղիմեց իշխան Պօտեօմկինին, վերջապէս ղիմեց Պետերբուրգ:

Բայց ունայնութիւն ունայնութեանց:

Խրիմի խանին ամեն տեղից այս միակ պատասխանն էին տալիս՝ «քրիստոնեաները գաղթում են իրանց ազատ կամքով: Կոտորածի առթիւ տարածւած լուրերի պատճառաւ իրան ղիմող կրօնակից ժողովրդին հովանաւորել և զանազան պատահարներից նրան պաշտպանելը՝ քրիստոնեայ պետութիւնը իւր սեպուհ պարտաւորութիւնն է համարում»:

Եւ ահա գաղթականների սայլերը ճոճացին: Նրանց մեծ մասը, ինչպէս ասացինք, յոյներ էին:

Հայերի մեծամասնութիւնը վճռեց Խրիմից չհեռանալ:

Պօտեօմկինի ազենաների խոստումներն և Պետրոս վարդապետի յորդորներն դադարել էին որևէ ազդեցութիւն գործելուց:

Ժողովուրդը միանգամայն անխուլ մնաց այդ ամենին:

Խրիմի հայերի այս դիմադրութիւնը Պօտեօմկինի ծրագրին մեծ հարւած էր:

Նրանով միանգամայն տակն ու վրայ էին լինում շատ քաղաքական հաշիւներ:

Բռնութիւն գործ դնելն մեծ անխոհեմութիւն և անհեռատեսութիւն կը լինէր Պօտեօմկինի կողմից:

Բռնութիւնը կարող էր, թերևս, բարդութիւններ առաջ բերել ինչպէս թերակղզու ընդհանուր ազգաբնակչութեան կողմից, նամանապէս, և նամանաւանդ, Օսմանեան արքունիքի կողմից, որ արդէն Պօտեօմկինի դէմ ատամներ էր կրճատացնում: Եւ առիթի էր սպասում, որ թերևս կարողանայ Պօտեօմկինից յետ վերցնել այն պատւական թերակղզին, որ նա, ռուս նշանաւոր քաղաքագէտը, Սուլթանից կորզել, յափշտակել էր առանց մի կաթիլ արիւն թափելու:

Այո, հայերի գաղթման հակառակ դուրս գալն մեծ հոգս էր պատճառում իշխան Պօտեօմկինին:

Սակայն իշխանը իբրև մեծ քաղաքագէտ, գիտէր ոչ միայն առանց պատերազմի երկիր նւաճել, այլ նաև ժողովրդի սրտերը նւաճողներ ևս գտնել:

Վերջին կարգի նւաճող դուրս եկաւ Յովսէփ արքեպիսկոպոս Արղութեանը, որին Պօտեօմկին իշխանը, կարելի է ասել, քաղաքագիտական հոտառութեամբ ձարեց, ճանաչեց ու ճանկեց, պինդ բռնեց:

ԺԱ,

Յովսէփ Արղութեանը ծնւած է 1743 թւականում: Նա իւր սկզբնական ուսումը ստացել է Մանասնի վանքում, ապա լրացրել ս. Էջմիածնում, ուր այդ ժամանակ կաթողիկոսական ասթոռի վրայ բազմած էր մի հոյակապ անձնաւորութիւն, — Սիմէօնը, որոյ եռանդուն գործունէութիւնը անշուշտ որոշ ազդեցութիւն գործած կը լինի Յովսէփի վրայ, որ ընդունակ մի աշխոյժ պատանի էր:

Եւ, ի հարկէ, նրա այդ արժանիքների պատճառաւ էր, որ կաթողիկոսը շուտով նրան վարդապետ, յետոյ էլ եպիսկոպոս ձեռնադրելով, ժողովարարութեան ուղարկեց թիւրքահայերի մէջ:

Նորընծայ եպիսկոպոսը՝ կաթողիկոսի յանձնարարութիւնը յաջողութեամբ կատարած լինելուն համար՝ 1773 թւականում, ուրեմն դեռ 30 տարեկան հասակումը, արքեպիսկոպոսութեան պատւին արժանացաւ և նշանակուեցաւ ուսահայերի առաջնորդ, որին այդ ժամանակ ենթարկւում էին Աժտարխանի, Ղզլարի և Մոզղոքի, նաև՝ երկու մայրաքաղաքների սակաւաթիւ հայ զաւուրներն:

Առաջնորդանիստ քաղաքը Աժտարխանն էր,

ուր 500 քանի տուն հայեր կային: Մնացած քաղաքներումը՝ աւելի քիչ:  
ԺԲ.

Յովսէփ Արղութեանին Սիմէօն կաթողիկոսը ուսահայ փոքրիկ հօտի վրայ առաջնորդ նշանակելով՝ նպատակ ունէր Աղւանից կաթողիկոսի ոտնձգութիւնների առաջն առնել վերջնականապէս:

Բանը նրանուամբ է, որ Աղւանից կաթողիկոսներն Լուսաւորչի օրերիցն սկսեալ՝ Էջմիածնի իրաւասութեան տակ էին գտնւում: Եւ կոչւում էին արքեպիսկոպոսներ, որոնցից ըմբոստներին ի կարգ հրաւիրում և պատժում էին, իսկ կարգապահներին վարձատրում էին՝ Էջմիածնի կաթողիկոսները:

Այդ մասին եղել են պատմական փաստեր, հայրապետական կոնդակներ, Աղւանից կաթողիկոսի ստորագրութիւններ, վերջապէս պարսից Շահ Թահմազ, Շահ Սէփին, Շահ Աբաս փոքրի և Շահ Սուլթան Հիւսէյնի հրովարտակներն:

Սակայն Աղւանից վերջին կաթողիկոսներէց մէկը, — Իսրայէլը, ըմբոստացաւ Էջմիածնի դէմ և իրան անկախ կաթողիկոս հրատարակեց:

Նա քարոզում և տարածում էր, որ Էջմիածնի և Աղւանից կաթողիկոսները միմիանց հետ նոյն են, ինչ որ մի ժամանակ Հրէաներն ու Սամարացիներն:

Վրաց Հերակլ թագաւորը՝ սկզբում պաշտպանում էր Իսրայէլին: Եւ թէպէտ վերջերում,

Սիմէօն կաթողիկոսի գրագրութիւնները և պատուիրակները միջոցաւ տրւած բացատրութիւնները հիման վրայ՝ իւր գիրքը փոխեց, — այնուամենայնիւ Իսրայէլը շարունակում էր իւր դաւերը իւր ազենաները և կուսակիցների ձեռքով:

Բանն այնտեղ հասաւ, որ նա մինչև իսկ Աժտարխանը Աղւանից թեմ էր համարում՝ Եւ սրա կաթողիկոսներն հետզհետէ իրանց իրաւասութիւնը աշխատում էին տարածել բոլոր ուսահայերի վրայ: Ռուս կառավարութիւնն էլ՝ բարեհաճ էր դէպի Աղւանից կաթողիկոսներն, որովհետև նա նրանց հետ, և Ղարաբաղի մելիքների հետ՝ քաղաքական բանակցութեան մէջ էր այդ ժամանակներում:

Նոյն իսկ Հերակլ վրաց արքան՝ ուսս գիււանագիտութեան ազդեցութեան տակ էր գործում:

ԺԳ.

Այս ամենը իմանալովն էր, որ Սիմէօն կաթողիկոսը Կատարինէ կայսրուհուն մի յատուկ դեսպան ուղարկեց՝ խնդրելով որ կայսերական հրովարտակով հաստատուի ս. Էջմիածնի իրաւասութիւնը բոլոր ուսահայերի վրայ:

Այս այն ժամանակն էր, երբ Կատարինէն պատրաստում էր Տաճկաց դէմ պատերազմ հրատարակելու:

Եւ որքան նա շատ սիրաշահէր ամենայն հայոց կաթողիկոսին՝ այնքան լաւ առաջ տարած կը լինէր իւր քաղաքական հաշիւներն:

Այդ էր պատճառը, որ հեռատես կայսրուհին՝ Սիմէօն կաթողիկոսի գիմուժը — իրան համար մի ցանկալի գիււտ համարելով՝ իսկոյն և եթ նրա խնդիրը կատարեց:

Եւ ոչ միայն բոլոր Ռուսաստանի հայերին Էջմիածնի իրաւասութեանը ենթարկեց, այլ և ինքնաբերաբար իւր հովանաւորութեանը տակն առաւ թէ ամենայն հայոց կաթողիկոսին և թէ ողջ հայոց ազգին:

Կայսրուհու այդ սիրալիր պատրաստականութիւնը՝ առիթ տուեց Սիմէօն կաթողիկոսին՝ Յովսէփ Արղութեանին ուսահայերի Առաջնորդ նշանակելու այն յուսով, որ Յովսէփը իւր ընդունակութեամբ՝ թէ ուսահայերի կապը Էջմիածնի հետ ամրապնդէ, և թէ, հարկաւոր դէպքում, ուսս կառավարութեան շնորհիւ Մայր Աթոռին և առհասարակ հայ ազգին այս ու այն ծառայութիւնը մատուցանէ:

ԺԴ.

Սակայն Սիմէօն կաթողիկոսի յոյսերը չարգարացան: Յովսէփ Արղութեանը, իբրև մի անփորձ, փառասէր երիտասարդ արքեպիսկոպոս իւր գործունէութեան հէնց առաջին քայլափոխումը մի այնպիսի հոսանքի մէջ գլորուեցաւ, որից այլ ևս չէր կարող դուրս գալ:

Այդ հոսանքը՝ ուսսական քաղաքականութիւնն էր, որ Մեծին Պետրոսի օրերից սկսած՝ ձեռնարկել էր օսմանեան և պարսկական պետութիւններից երկիր խել՝ նրանց հպատակ այլ-

ազգի, և յատկապէս քրիստոնեաների, միջոցաւ, նրանց գաղտնի ու յայտնի աջակցութեամբ: Իսկ այդպիսի քրիստոնեայ այլազգիների մէջ հայերը, յայտնի է, որ վերջին տեղը չէին բռնում թէ Տաճկաստանում և թէ Պարսկաստանում:

Բացի այն, որ Յովսէփը քաղաքական հոսանքի մէջ գլորեցաւ, այլ նաև իշխան Գրիգոր Պօտեօմկիւնի նման քաղաքագիտի ճանկն ընկաւ:

Իշխանը հայոց երիտասարդ առաջնորդի անփորձութիւնից և փառասիրութիւնից մեծապէս օգտւելով, նրան մի կատարեալ գործիք շինեց իւր ձեռքին:

Նա նրան պատւէրներ և հրահանգներ էր տալիս այսպէս կամ այնպէս գործելու. նա նրան յանձնարարութիւններ էր անում ինչպէս իւր շտաբի ծառայողներից մէկին, իւր աղիւտանտներից մէկին, միայն թէ նրա այդ աղիւտանտը՝ փոխանակ էկսէլըանդի՝ վեղար էր կրում:

ԺԵ

Նախորդ յօդածներում մենք տեսանք, որ հակառակ Պօտեօմկիւնի ծրագրին՝ Սրբիմի հայերը չէին կամենում գաղթել. տեսանք, որ այդ նրպատակի համար գործադրւած արևեստական միջոցները ի զուր անցան:

Եւ Պօտեօմկիւնը շարած էր մնացել:

Նրան այդ նեղութիւնից հանեց Յովսէփ Արղութեանը:

Պետրոս վարդապետի միջոցաւ նա մի դիմումն արաւ Սրբիմի յամառ հայերին, որ այս

անգամ ընկճեցան:

Եւ ահա ընդհանուր հայերի, — որոնց թիւը 20,000 էր համուում, — գաղթը սկսեցաւ Սրբիմի հովասուն լեռներից ու ծաղկազարդ դաշտերիցը՝ դէպի Ազովի և Դոնի աւազուտներն ու եղեգուտները՝ ընդ հսկողութեամբ Սուվօրովի զօրքերի սկիւններին:

Մի երկու տարուց յետոյ՝ Պօտեօմկիւնը՝ Սրբիմի խանութիւնը ջնջելով՝ թերակղզին միացրեց Ռուսաստանի հետ:

Իսկ Շահէն-Գիրէի և նրա ազդեցիկ պաշտօնեաների բերանացի բոբոնցներին վերջ տալու համար՝ նրանց բերանը մեղր քաշեց, — 100000 բուբլի նէր բաժանեց նրանց՝ կէսը Չահէն-Գիրէին, կէսը նրա պաշտօնեաներին:

Այսպէս առանց արիւնհեղութեան՝ Սրբիմը ուսաց ձեռք անցաւ քրիստոնեայ տարրի գաղթման շնորհիւ: Մի ճշմարտութիւն, որ ուսս զօրքերի հրամանատարը չէր ծածկում կայսրուհուն ուղարկած իւր զեկուցագրի մէջ գրելով թէ՛ «քրիստոնեաներին թերակղզուց դուրս բերելն՝ պէտք է մի նշանաւոր նահանգի նուաճում համարել»:

Դառնանք գաղթականներին:

ԺԶ.

Գաղթականները Սրբիմից դուրս եկան երեք մեծ խմբերով 1778 թւականում:

Առաջին խումբը դուրս եկաւ յուլիսի 18-ին, երկրորդը՝ օգոստոսի 20-ին, իսկ վերջինը սեպ-

տեմբերի 28-ին:

Նրանք գնում էին հետիոտտ, բացի ծերու-  
նիներից և մանուկներից, որոց տանում էին կա-  
րասիքներով բեռնաւորած սայլերը, թւով 6000:

Գալով նրանց հոգևոր առաջնորդներին՝ նը-  
րանք,— այդ սևազլուխ սևերեսները առաջւանից  
մեկնել էին կառքով: Ճանապարհի ծախքի հա-  
մար կառավարութիւնը նրանց 2779 ր. փող էր  
վճարել:

Թերակղզուց դուրս գալով, ժողովուրդը իւր  
ետքեւում թողնում էր իւր փառաւոր եկեղեցի-  
ներն ու վանքերը, գեղեցկաշէն տներն, իւր  
վաճառանոցներն ու արհեստանոցները, իւր կա-  
նաչազարդ բլուրները՝ ամբողջապէս այգիներով  
ծածկւած, իւր պտղալից պարտէզները, իւր  
ծաղկաւէտ դաշտերն, իւր հասկալից արտերն,  
իւր սառնորակ աղբիւրները, իւր պապերի, իւր  
սիրելիների շիրիմ ու արձաններն...

Եւ երբ այդ ամենը իւր աչքերից ծածկւե-  
ցաւ,— զաղթականների սիրտը յանկարծ փղձկաց:  
Եւ երեխի նման նրանք սկսեցին աղիտղորմ ձայ-  
նով լաց լինել:

Յետ դառնալու փորձեր եղան. զիշերնե-  
րը փախչել ցանկացողներ յայտնւեցան, սակայն  
ամէն անգամ նրանց հանդէպ ծառացած, ցցւած  
զօրքերի սուխնները, դազախների նիզակները,  
նրանց ամբեցնում, սլքեցնում էին:

Ժէ.

Գաղթականների վիշտն ու յուսահատու-

թիւնն էլ աւելի սաստկացաւ, երբ նրանք ճա-  
նապարհին կրած հազար ու մէկ նեղութիւննե-  
րից յետոյ՝ ուր ուրեմն հասան իրանց բնակու-  
թեան համար յատկացրած վայրը, Դօն գետի  
աւազուտները՝ մի վայրենի անապատ, որի մի-  
ակ գեղեցկութիւնը կազմում էին ճախճախուտ-  
ները, եղեգնուտները, շամբերը իրանց թունա-  
լից, ախաւից օդով ու զեռուներով:

Արդութեան Յովսէփ Արհւոյն յորդորներին  
անսալով և «որորմած կայսրուհու կամացը հնա-  
զանդելով» անա թէ վերջ ի վերջոյ խեղճ ժողո-  
վուրդը որտեղից ուր ընկաւ, իւր 400 տարւայ  
պատմական, արգաւանդ, դրախտանման հայրե-  
նիքը ինչի հետ փոխանակեց:

Դեռ այդ բաւական չէր:

Հայ ժողովուրդը դեռ ստիպւած էր երկու  
տարի շարունակ վրանների տակ թափառել Սա-  
մարա և Եկատերինօսլաւ քաղաքների շրջակայ-  
քում՝ տանելով ցուրտը, տօթը, քաղցը:

Նրանցից շատերը չզիմացան թափառակա-  
նութեան ծանր հարւածներին և մեռան՝ աղէկէզ  
սրտով յիշելով իրանց հայրենի Խրիմը:

Իսկ կենդանի մնացածները՝ միւս անգամ  
հայրենիքի երեսը անսնելուց բոլորովին յուսա-  
զուրկ եղած՝ ձեռնարկեցին աշխատանքի, ըստ  
իրանց առածին, «ասեղով հորեր փորելու» ըս-  
կսելով:

Եւ ամեն անգամ աւազները փորփորելիս,  
եղեգնուտները կտրատելիս, մաքրելիս, զաղթա-

կանները, երբ գատիկ կոչւած միջատին էին հանդիպում, բռնում էին և լալագին աչքերով հարցնում, «գատիկ, Խրիմի ճամբան ո՞րն է»:

ԺԸ.

Կառավարութիւնը, ի հարկէ, գաղթականներին դրամով օգնում էր, որ օգնութիւն էլ չէր իսկապէս, այլ հաշիւ:

Ուրիշ կերպ ի՞նչ միտք ուներ նրանց տեղահան անելն:

Գաղթականները պիտի ապրէին, որպէս զի անապատները շէնացնելու ոյժ ու հնարաւորութիւն ունենային:

Կառավարութեան և գաղթականների մէջ միջնորդ էր Յովսէփ Արղութեանը, որոյ ձեռքովն էին անցնում, ըստ մեծի մասին, գանձարանից գաղթականներին յատկացրած գումարներն:

Այդ նպաստովն էր, որ շինւեցան Նոր-Նախիջևան քաղաքը և շրջակայ հինգ հայկական զիւղերն:

Հողեր և մի քանի արտօնութիւններ ևս արւեցան գաղթականներին:

Ի վերայ այսր ամենայնի, նրանք սրտով չէին կարող կպչել, հաշտել այդ նոր հայրենիքի հետ:

Այս էր ահա պատճառը, որ երբ մի քանի տարուց յետոյ Պօտեօմկինը միացրեց Խրիմը Ռուսաստանի հետ, գաղթակիտներէից շատ շատերն, նամանաւանդ տեղական օղն ու ջուրը չվերցնողներն, յետ դառնալու հարցը նորից

բարձրացրին:

Սակայն այդ իմաստով եղած թէ խմբական և թէ անհատական ամեն տեսակ խնդիր, ջանք ու աշխատանք ի գուր անցան:

Յովսէփ Արղութեանը պատւէր ու հրահանգ էր ստացել՝ ժողովրդին, նրա անհատներին յետ կասեցնել իրանց այդպիսի ցանկութիւններից: Եւ Յովսէփ Արճին կասեցնում էր, իւր բոլոր ազգեցութիւնն ու ճընշումները ի գործ դնելով: ԺԹ.

Նախիջևանի և նրա հինգ զիւղերի գործերը փոքր ի շատէ կարգի ձգելուց յետոյ, Արղութեան Յովսէփ եպիսկոպոսը, Պօտեօմկինի յանձնարարութեամբ, մի գաղթականութիւն էլ Բեսարաբիայի և Սօլդակիայի հայերից անցկացրեց ռուսաց սահմանը:

Յետոյ անցաւ Բէնդէր, Եաշ, Փօթուշան, Սուչօվա քաղաքները, որոնց մէջ կրօնական շրջեղ հանդէսներ էր կատարում, քարոզներ խօսում: Եւ այդ ամենը այն նպատակով և եթ, որպէս զի տեղական հայերի սիրաը դէպի Ռուսաստան գրաւէ:

Իսմայիլ բերդաքաղաքի պաշարման, առման և ռուս զօրքերից կողոպտման (շարունակ 3 օր) ժամանակ՝ տեղական հայերն ևս զգալի վրասներ էին կրել կեանքով և կարողութիւնով:

Կենդանի մնացածներից 1650 հոգի բաց երկնքի տակն էին մնացել՝ մերկ, քաղցած, յուսահատ:

Սուվօրով զօրապետի պահանջմամբ, Յովսէփ Արհին մօտակայ քաղաքների մէջ հանգանակութիւն բանալով, եկաւ այդ խեղճերին խնամելու:

Բայց խնամատարութեան գործը գլուխ չբերած մի վարդապետի յանձնեց, իսկ ինքը Պօտեօմկինի պահանջմամբ Պետերբուրգ մեկնեցաւ «հայկական գործերը տնօրինելու» համար իբր:

Եւ թէպէտ 5 ամիս Արղութեանը Պետերբուրգ մնաց, բայց «հայկական գործերը տնօրինելու»,—այսինքն Արարատեան հայերին գուղւնելու, ոտքի հանելու խնդիրը յետաձգեցաւ աւելի պատեն ժամանակի:

Պօտեօմկինը անցաւ գնաց կրկին Մօլթավիա իւր գլխաւոր բանակատեղին՝ Եաշ քաղաքում:

Արղութեանը հետևեց նրան, հրահանգ ստանալով որպէս զի ուսանների ցարդ գրաւած քաղաքներում գանւած հայերին գաղթեցնել տայ դէպի ուսաց սահմանները,—դէպի Դուբօսար քաղաքը, Դնէպր գետի վրայ:

Պօտեօմկինի այդ հրահանգն ևս Արղութեանը յաջողութեամբ գլուխ բերեց:

Սակայն իշխանը ինքը գաղթականներին խոստացած օգնութիւն ու արտօնութիւնները գլուխ չբերած մեռաւ (1791 հոկտ. 5-ին):

Ճիշտ է, Պօտեօմկինի խոստացածներն նրա յաջորդը,—կօմս Բեդբօրօզիօն յաջողեցրեց, բայց այն պայմանաւ, որ գաղթականները հիմայ էլ

Դուբօսարից գաղթեն մի նոր վայր, ուր նրանց համար մի նոր քաղաք և զիւղեր շինելու նոր ծրագիր էր կազմւել:

Յովսէփ Արհին այդ ծրագիրն ևս իրագործեց:

Քաղաքը շինւեցաւ և յանուն իշխան Դրիգոր Պօտեօկինի կոչւեցաւ Դրիգորիօպօլ: Իսկ զիւղերից մէկը՝ յանուն Յովսէփ Արհւոյն իրան, կոչւեցաւ Եօսիֆօվիա և միւսը՝ յանուն իւր եղբօրորդւոյն՝ Վասիլեվիա:

Ահա այսքան մեծամեծ ծառայութիւնների համար էր, որ Ռուս կառավարութիւնը Յովսէփ արքեպիսկոպոսին այնպիսի պարգևներ և շքանշաններ տւեց, որոց նմանը ուս բարձրաստիկան հոգևորականների մէջ անգամ հազիւ երեք անձինք ունէին: Եւ մարդիկ, ինչպէս այդ անձինքների վրայ մատով էին ցոյց տալիս, Յովսէփ Արհւոյն վրայ ևս մատով էին ցոյց տալիս թէ հայերը և թէ ուսաները:

Դրա համար էլ Յովսէփ Արհին հրճուում ու յափշտակուում էր այդ պարգևներով ու նրանց համարում էր իբրև մի առանձին և ողորմած ուշադրութիւն դէպի հայ ազգը, դէպի «Յարեթեան սերունդը և Արամեան ազգը», որին համար նա կարծում և եկեղեցիներում քարոզում էր իբրև թէ մի «ոսկէ դար է բաց անում» ինքը:

Ի.

Նախնիաց յօղւածներում մենք տեսանք, թէ Յովսէփ Արղութեան Արհին ինչ և որքան անղնահատելի ծառայութիւն արաւ ուսական

քաղաքականութեանը, զոհ բերելով նրան տաս-  
նեակ հազարներով տաճկահայերի գոյքը, կայքը,  
կենանքը այն յուսով, ի հարկէ, որ այդ գոհարե-  
րութեամբ ազգի համար լաւագոյն ապագայ է  
պատրաստում:

Հէնց այդ յուսովն էլ էր, որ ս. էջմիած-  
նի գահակալները սկսեալ՝ աշխարհիս ամեն մի  
կողմում գտնուած ազգեցիկ հայի, փոքր ի շատե  
յայանի գործչի ուղղած իւր նամակներովը Յով-  
սէփը անգաղար ոգևորում և յուսադրում էր  
հայերին, որ իրանց յոյսը ուսական իշխանու-  
թեան վրայ զննն:

Եւ հայերը դնում էին: Ճշմարիտ է, նրանց  
մէջ կային անհասներ, որոնք Արղութեանի հետ  
համամիտ չէին, որոնք համոզւած էին, թէ նա  
ինքը մոլորւած է և մոլորեցնում է ժողովրդին,  
սակայն զրանք, թէ իրանց թւի սակաւութեամբ  
և թէ անդորութեամբ, չէին կարող հոսանքի ա-  
ռաջն առնել:

ԻՍ.

Այդ կարգի անհասներին էր կաթողիկո-  
սական տեղապահ Մինաս արքեպիսկոպոսը, որ  
Արղութեանի մտադրութիւնը ցնորք էր համա-  
րում ուղղակի:

Մինասից էլ առաջ միւլնոյն կարծիքն ու-  
ներ Ղուկաս կաթողիկոսը, որ «զգոյճ և խորա-  
խորհուրդ անձն» էր\*):

\*) Ղուկասից էլ առաջ նոյն կարծիքի էր և Մինոն կաթո-  
ղիկոսը. տես Գրեան՝ Հայոց պատմ. գիրք Ը. Կր. 574.

Այս կաթողիկոսի արտայայտած մտքերի  
ճշմարտութիւնը հէնց այժմ, 100 տարի յետոյ  
էլ, անժխտելի են և ուշագրաւ: Ուստի մենք  
այս մտքերի հետ կուզենք ծանօթացնել մեր  
ընթերցողներին, թարգմանելով նրա այն կոնդա-  
կից, որ 1789 թւին նա գրել է Հնդկահայ յայտ-  
նի գործիչ Շամիր կամ Շահամիր\*) աղային, ի  
պատասխանի նրա այն նկատողութիւններին և  
մեղադրանքին, թէ կաթողիկոսը ազգի ազատու-  
թեանը համար չէ աշխատում, Յովսէփի ընթաց-  
քին չէ հետևում:

ԻԲ.

«Գրած էիր մեզ մեր աշխարհի և ազգի ա-  
զատութեան համար հոգ տանել. և մի քանի  
կարգադրութիւններ էիր ցոյց տւել, որոնք ար-  
տադրում են պարզմտութեամբ ազգիս վրայ  
ունեցածդ ջերմեռանդ սիրուց և շատագովու-  
թիւնից»:

Բայց երանի թէ այդ կարգադրութիւնների  
գէթ մի մասը իրականանար, արդիւնաւորւէր:  
Որովհետև զրա համար պէտք էր, որ մեր ազգը  
հաւատացեալ և քարեմիս տէրերի հովանւոյն  
տակը լինէր և ապահովութիւն ունենար, որպէս  
զի նրանց խնամածութեամբ կարողանար եր-  
ջանկութեան ձգտիլ: Բայց աւասիկ ազգը, ըստ  
մեծի մասին, մատնուած է անողորմ թշնամիներ-

\*) Միւլնոն կաթողիկոսի վկայութեամբ Շահամիրը կեղծ ա-  
նուն է դարարաղից Հնդկաստան զնացած Մովսէս անունով մի  
հայի:

րի խստութիւններին: Եւ հաւատարմապէս ծառայելով հանդերձ կարող չէ ողորմութիւն գրանել, ուր ֆնաց թէ ապստամբութիւն ցոյց տալով, որ յէ ել կարող քնար»:

»Առ այս թերևս կասես թէ ծառայելու նախապատուութիւն էք տալիս և ազատութիւնը չէք սիրում: Սակայն երանի թէ օրհնեալը, այժմ այս կողմերը գայիր և շրջագայէիր Զուղայից սկսած մինչև այստեղ և այն կողմերը, որտեղ մեր ազգայինները կան: Եւ ախա՛րսես ա վերահասութեամբ իմանայիր մերազնէից կացութիւնը: Այն ժամանակ ինքդ էլ կհամոզւէիր, թէ քո դիտաւորութիւնը չէ կարող գլուխ գալ:

Եթէ մենք համոզւած լինենք, որ գլուխ գալու է, միթէ յիմար ենք, որ չցանկանանք այս տառապանքներից ազատւելու»:

Յանցի մէջ ընկած ձկները և թակարդի մէջ բռնւած թռչունները ազատւելու ջանք են անում. ուրեմն ո՞րքան առաւել մենք, բանական մարդիկս, ազատութեան կբաղձանք: Բայց որովհետև ազատութիւն ձեռք բերելն այժմ շատ դժւարին է մեզ և խիստ վտանգաւոր, ուստի պէտք է երկու չարիքներից փոքրագոյնը ընտրել»:

«Խնդրեմ միտք բեր Երուսաղեմի և այլ տեղերի այն հրէաներին, որոնք Հռոմայեցիներից ապստամբեցան, թէ ինչէր չկրեցին: Եւ մի մոռանար, որ ապստամբող հրէաները ոյժ, գորութիւն ունէին»:

Միտք բեր և այն հրէաներին, որոնք թէև

աւելի խիստ տանջոււմ էին եգիպտացիների ձեռքի տակ, սակայն չէին ապստամբում: Փարաւոնի դէմ չէին ընդվզում, սրովհետև տեսնում էին, որ իրանք սնւոք են: Մինչև որ Աստուծո՞վ գլխաց նրանց և Մովսիսի ձեռքով, նշաններով և սքանչելիքով դուրս հանեց, ազատեց Եգիպտոսից»:

«Այժմ ո՞վ է Աստուծոց մեզ ուղարկւած Մովսէսը, որ կարողանայ այդ բանն անել: Եւ դեռ նրանից (Մովսիսից) էլ աւելի բան անել: Որովհետև հրէաները միմիայն մէկ Փարաւոնի իշխանութեան ներքոյ էին գտնուում, իսկ մեր ազգը ցիր ու ցան եղած մի քանի իշխանութիւնների երկիրներումն է գետեղւած»:

«Ինձ այսպէս է թւում, թէ ունակ ըստ իրանց հաճոյից քեզ հետ խօսելով թէ այս ու այն կողմերից մեզ անոնւորութիւն և օգնութիւն կլինի՝ միտք գողացել են: Այդ պատճառաւ էլ, թերևս, իմ այս գրածները քեզ ծանր կթւան: Սակայն ըստ իմաստունին, դու աւելի լաւ համարիր բարեկամի վերքը, քան նրան ճարտոր: Եւ հաստատապէս իմացիր, որ «ոյ ի հիրսիսական սերորթիւնէն եւ ոյ յայոց մեզ այցելութիւն կարէ յինէլ այժմ»:

«Մի մոռանար, որ մենք թշնամիներով շրջապատած ենք, որոնք եթէ որևէ նշան տեսնեն, որ մենք մեր աչքը մեր կարծեցեալ օգնիչներին վրան ենք տնկում, կամ նրանց յարուս, այն ժամանակ մեզ սպասում է նեղութիւն, խոչտանգումն, յափշտակութիւն և սուր»:

Իսկ եթէ իմ այս գրածներս անստոյգ համարես և դարձեալ հանոյախօսներին մտիկ ցաս, նրանց անասս,—այն ժամանակ ուրիշ հաւատարիմ աղբիւրներից տեղեկացիր թէ անցեալ տարիներն, երբ Արցախեցիք (դարաբաղցիք) «ճրգսեցան առ ապարիևորիւն ևնոցա»,—ինչէր կըրեցին նրանց վրայ իշխող բռնաւորի ձեռքից: Ինչպէս մահացաւ խղճալի Յովհաննէս կաթողիկոսը. ինչպէս Գանձասարի ս. Աթոռը տակն ու վրայ եղաւ. և այժմ ուր են հայ մելիքներն, նրանք ինչէր չկըրեցին»:

Այս ամենը տեղեկացիր, ստուգիր, ապա սուան ու ճշմարիտը ջոկիր և մեզ մի մեղադրիր\*):

ԻԳ,

Ղուկասի կոնդակի բառերն, որոնց մենք ինքներս ենք ընդգծել, ուղղւած են դէպի Յովսէփ Արղութեանը և նրա գործունէութիւնը, որին Ղուկասը չէր համակրում: Եւ հէնց այդ նըպատակաւ էլ երկու անգամ Արղութեանին էջմիածին էր հրաւիրել ուրիշ պաշտօն տալու: Սական նա հայրապետական այդ կրկնակի հրաւերներն ևս մերժած էր:

Այդ ժամանակ Յովսէփ Արղութեան անունով միմիայն հոգևորական, կուսակրօն էր կոչւում: Իսկ իւր անձով,—իւր «չքեղափառ անձով» և գործունէութեամբ մի կատարեալ զինւորական—քաղաքական գործիչ էր ոուս կառավարութեան ձեռքին:

\*) Գիւան հայոց պատմութեան հատոր Ա.—Բ. էր. 17.

Եւ եթէ երբեմն-երբեմն զբաւոր յարաբերութեան մէջ էր մանում կաթողիկոսի և այս ու այն էջմիածնեցու հետ,—դա լինում էր բացաքառապէս այն նպատակաւ, որպէսզի նրանց ևս որսայ, նրանց էլ համակերպէ իրան քաղաքական ծրագրի հետ:

Աւելացրէք դրա վրայ և այն, որ Յովսէփը ինքզինքը ս. Գրիգոր Լուսաւորչի Պահլաւ ցեղից սերւած շառաւիղ էր համարել ու հրատարակել, որ ոուս կառավարութեան կողմից՝ նա ճանաչւած և ընդունւած էր որպէս «իշխան և կաւալեր», որ Օդեսսայի մօտ 4 զիւղ պարզէր ստացել կառավարութիւնից, որի համար տարեկան, մինչև ցմահ, 3000 բուբլի կենսաթոշակ էր նշանակւել արքունի գանձարանից, որ յունական մետրօպօլիտներին կիսափիրունը,—մանդիա ոուս մետրօպօլիտից փոխ առնելով՝ Կատարինէ կայսրուհուն էր ներկայանում, նրան հաճոյք պատճառելու համար, որի ճոխ ու փարթամ սեղանին նոյն իսկ Պօտեօմկլինի նման ամենաշաղլ մարդն էլ էր նախանձում, որ զօրքերի առաջից անցկենալիս՝ նրանցից զինւորական պատիւ էր ստանում, որի վրանի առաջ զինւորական պահակներ էին կանգնում և այն և այն—այսպիսի մի եպիսկոպոսի համար ինչ արժէք և նշանակութիւն կարող էր ունենալ կաթողիկոսի հրաւերը կամ պատւերը էջմիածին վերադառնալու և նոր պաշտօն ստանձնալու նկատմամբ:

Կաթողիկոսի հրաւերի ներքին միաքն այն

էր, որ Արղութեանին դուրս քաշէ, հեռացնէ այն ասպարէզից, ուր նա գլորւած և, ժողովրդական բառով խօսելով, խելֆարժուծ էր եղած:

Բայց նախ որ Յովսէփը ինքը այդ բանը չէր ցանկանում: Եւ երկրորդ՝ եթէ ցանկանար էլ՝ նրան ձեռքից բաց չէին թողնում:

Քաղաքականութիւնը դեռ շատ կալեր ունէր նրա ձեռքով կալսելու...:

Իհ.

Մեր ընթերցողներին արդէն յայտնի է, թէ ինչ բարակ քաղաքագիտութեամբ՝ իշխան Պօտեօմկինը տիրեց ու տիրապետեց Տաւրիկիան թերակղզուն առանց պատերազմի և արիւհեղութեան:

Յայտնի է, թէ նա ինչպէս Շահէն-Գիրէին որսալով նախ և առաջ ոռոսական կուսակցութեան կողմը զօրացրեց թերակղզում, յետոյ այդ կուսակցութեան պարագլխին, իբրև անկախ իշխողի, խանական գահոյքի վրայ բազմեցրեց, յետոյ, — շատ քիչ յետոյ էլ — այդ գահոյքի ոտները ջախջախեց. գահոյքը խորտակեց, գահակալին տապալեց և նրա խանութիւնը ոռոսական մի նահանգի վերածեց:

Մի այդպիսի քաղաքագիտական խաղ էլ՝ Պօտեօմկինը Յովսէփ Արղութեանի գլխին էր խաղում, երբ նրա հետ խորհում ու խորհրդակցում էր Արարատեան աշխարհում հայկական մի անկախ թագաւորութիւն հիմնել ոռոսաց բարձրագոյն հովանաւորութեան ներքոյ:

Սակայն, ինչպէս յիշել ենք, Պօտեօմկինին իրան չվիճակուեցաւ իւր հնարած այդ խաղին ձեռնարկելու ու դուրս բերելու:

Այլ դա վիճակեց նրան յաջորդող կոմս Պլատօն Զուբովին, Կատարինէ կայսրուհու նոր ֆաւօրիտին:

Պօտեօմկինի նման՝ այդ կողմից Զուբովը ևս բաղդաւոր էր: Սրան ևս Յովսէփ Արղութեանը ծառայեց մեծ հաւատարմութեամբ, սրա պատւէրներն ու հրամաններն ևս նա գլուխ էր բերում մեծ ճշտութեամբ՝ միշտ այն յոյսը տածելով, որ այս անգամ սրան, — Զուբովի միջոցաւ՝ ձեռք կը բերէ Հայաստանի անկախութիւնը:

Սանահնի և Էջմիածնի մօնթի քաղաքականութիւնը՝ սրանից աւելի առաջ չէր կարող գընալ:

Ի՛՛՛՛՛.

1796 թւականում Ռուսաստանը ձեռնարկեց իւր արշաւանքներն դէպի Պարսկաստան: Յովսէփ արքեպիսկոպոսի ներկայութիւնը այդ արշաւանքներին՝ խիստ անհրաժեշտ էր:

Նա քաջ տեղեակ և ծանօթ էր, ինչպէս Տաճկաստանի, նմանապէս և Պարսկաստանի, մասնաւորապէս Անզրկովկասի վիճակին, նրանց մէջ տեղի ունեցած անցքերին, նրանցում գործող անձինքներին, ի մասնաւորի հայերին և վրացիներին, որոց թագաւորական տան անգամների հետ՝ առանձին մտերմութիւն ունէր. իբրև միջնորդ նրանց և ոռոսաց արքունիքի մէջ:

Կոմս Պլատօն Զուբովի պահանջմամբ՝ Յովսէփ արքեպիսկոպոսը մեկնեցաւ Ղզլար՝ այնտեղ սեսակցելու և խորհրդակցելու համար նրա եղբայր Վալերիանի հետ, որ Պարսկաստան արշաւող զօրքի հրամանատար էր կարգւած:

Յովսէփի իրան ասութեամբ կոմսը (Վալերիան Զուբովը) իրան «հրամայել է» և շատ խնդրել, որ արշաւանքի ժամանակ ուղեկցի ոռու բանակին:

Եւ Յովսէփը ուղեկցեց «մեր (հայ) ազգի օգտի և յուսադրութեան համար»:

Առանց առանձին դժուարութիւնների ոռուները տիրեցին Դարբանդին, Բագուին և Ղուբային:

Արդութեանի ազդեցութեամբ և բանակցութեամբ Շամախու, Նուխու և Ղարաբաղի խաները ոսներին հնազանդութիւն յայտնեցին:

Նոյնը արաւ և Գանձակի Զաւադ խանը, որի հետ բանակցողը նոյն Յովսէփ Արդութեանն էր:

Արդութեանը այսպիսով մեծապէս նպաստում էր ոռուսաց զէնքի յաջողութեանը ոչ միայն խաների հետ բանակցելով, այլ նաև ոռու բանակին սայլեր և պաշար մտտակարարելով, որպիսի նպատակի համար նա թէ շրջաբերական թղթեր էր ուղարկում հայերին և թէ յաճախ շրջում հայկական գիւղերը:

Այդ գիւղերում Յովսէփ Արդութեանը հայերին յայտարարում էր, իբր թէ ոսները ե-

կել են նրանց պարսիկների ձեռքից ազատելու համար, իսկ գլխաւոր հրամանատար Զուբով կոմսի պաշտօնական պրօկլամացիաները քարոզում էին, իբր թէ ոռուները եկել են Ալա Մահմադ խանին պատժելու համար:

Հէսց այդ պատճառաւ էլ կոմսը և նրա հրահանգով նրա բոլոր ստորագրեալները խիստ քնքշութեամբ և կարեկցութեամբ էին վերաբերում դէպի պարսիկ ազգաբնակութիւնը: Եւ ընդհակառակը՝ շատ անտարբեր, նոյն իսկ բիրտ կերպով էին վերաբերում դէպի հայ ազգաբնակութիւնը:

Զուբովի այս վարմունքը ամեն մի հրամանատարի յատուկ՝ դիպլօմատիկական խաղ էր հարկաւ:

Հարկաւ ոռու բանակը պարսկական արշաւանքին ձեռնարկած էր ոչ հայկական իշխանութիւն կազմելու, ոչ էլ Աղա Մահմադ խանին պատժելու, այլ այդ երկիրներին տիրապետելու, Ռուսաստանի սահմանները ընդարձակելու համար,

Այս բանը եթէ հայ ժողովուրդը չէր հասկանում և շարունակում էր իւր անձնէր ծառայութիւնները ոռու բանակին՝ այնքան էլ զարմանալի չէ:

Բայց որ Յովսէփ Արհին Զուբովի նպատակը իմանալով հանդերձ՝ շարունակում էր յիմացնել, խելքից հանել հայ ժողովրդին, չթոյլ տալով, որ ժողովուրդը տրտնջայ, Զուբովի դէմ ձայն ծպտուն հանէ, — ահա թէ ինչն է զարմանալի:

ԻԶ.

Նորանաւած երկիրներում հայ քրիստոնեայ տարրը զօրացնելու համար՝ ծրագրուած էր Ղարաբաղում մնացած հայերին գաղթեցնել այն տեղերը:

Իսկ Կուր և Արաքս գետերի խառնարանի մօտ՝ մի նոր գաղթականութիւն պիտի կազմւէր՝ զորս ոռոս զինուորներից բաղկացած:

Զինուորների թիւը 2000 հոգի էր լինելու, որոց զբաժանւան և հողային պետքերը, հարկաւ, կառավարութիւնը ինքը պիտի հոգար, ինքը մատակարարէր:

Իսկ այդ զինուորներին կի՛ն մասակարողները, ըստ ծրագրի, պիտի լինէին հայերը, ևս և վրացիները:

Եւ Կատարինէն իւր այս ծրագիրը ևս անշուշտ կիրագործէր, եթէ որ նոյն 1796 թւականի նոյեմբեր ամսում կնքած չլինէր իւր մահկանացուն:

Պօղոս առաջին՝ գահը բարձրանալով՝ իւր հանճարեղ մօր ծրագիրները խոտեց, արհամարհեց և Անդրը-Կովկասից շտապով յետ կանչեց ոռոս զօրքին:

Առանց իմ գրելուն էլ կարծեմ ընթերցողին հասկանալի կը լինի ոռոս զօրքին շարունակ օգնող հայ ազգաբնակիւթեան զրութիւնն ու վիճակը պարսիկների ձեռքից, երբ այդ զօրքը թողեց Անդրկովկասը իւր բաղդին և հեռացաւ:

Հայ ժողովրդի անել վիճակի արձագանքը,

մինչև իսկ հեռաւոր Դարբանդին էլ հասաւ, որտեղի հայերը՝ իրանց գլուխը պրծացնելու համար՝ հէնց ոռոսաց զօրքի հետ միաժամանակ գաղթեցին, գնացին բուն Ռուսաստան և այնտեղ մի քաղաք շինեցին Ս. Պաչ անունով:

Սակայն Դարբանդի հայերի յարմարութիւնը չունէր իւր մայր երկրում ապրող հայ ժողովուրդը, որի առանց այն էլ ծանր գրութիւնը՝ ևս առաւել ծանրացաւ, երբ Զուբովի բանակի հեռանալուց յետոյ՝ ձայն ընկաւ, թէ Ադա Մահմադ խանը երկրորդ անգամ գալիս է հայերին պատժելու, ինչպէս որ առաջին անգամ պատժել էր վրացիներին՝ նրանց մայրաքաղաք Թիֆլիսը՝ աւերակների կոյտ դարձնելով:

Եւ մի սև առաւօտ, արդարև, Ադա Մամադ խանը երևացաւ Շուշիի ժայռերի վրայ՝ այնտեղից իւր վերջնական հաշիւը տեսնելու համար խամսայի մելիքների հետ, որոնք Մեծին Պետրոսի օրիցն սկսեալ իրանց յոյսը Ռուսաստանի վրայ դնելով՝ բազմիցս անհաւատարմութեան նշաններ էին ցոյց տւել դեպի պարսից գահոյքը:

Բարեբախտաբար Ադա Մամադ խանը հէնց Շուշիումն էլ՝ քնած ժամանակ սպանւելով՝ նրա դժոխային ծրագիրը գլուխ չեկաւ:

ԻԷ.

Սակայն ինչ որ ներքինի պարսիկը չկարողացաւ անել հայերի դիւին, — այն արաւ բնութիւնը: Եւ դեռ աւելի մեծ, աւելի զարհուրելի չափով:

Միմեանց յաջորդող երաշտութիւնը, սովը և 1798 թւականի ահաւոր ժանտախար՝ մեծամեծ գոհեր տարաւ հայ ժողովրդից: Իսկ կենդանի մնացողներն էլ՝ լեղաճաք, լեղապատառ ցաք ու ցրիւ եկաւ, ուր որ աչքերը տեսում էր և ոտները հասնում:

Ղարաբաղը ամայացաւ, աւեր աւերակ դարձաւ: Նա այժմ գուտ պարսկական երկիր դարձաւ և պարսիկ ժողովրդով:

Նրա բացարձակ տէրը, այժմ Իբրահիմ խանը դարձաւ:

— Հապա հայ մեկիքները, Ղարաբաղի այդ իսկական, օրինական տէրերը ի՞նչ եղան արդեօք:

— Մեկիքներից էլ մեռնողները մեռան, իսկ մնացողները ժամի դռնում կանգնած և մի ժամանակ յայտնի հարուստ եղած՝ աղքատ կնոջ նման այս ու այն կողմն էին ընկնում անդադար և ձեռները մեկնելով կողկողագին երգում.

«Ողորմութիւն արէք, պարոն,  
Մնտուն, անտէր աղքատին».

Նրանք՝ այդ մեկիքները երբեմն վրաց արքունի դուռն էին բաղխում և մեծ ճիգ ու ջանք թափում, որպէս զի իրանց իրաւունք տրւի ցրւած ժողովրդին հաւաքելու վրաստանում, առանց գլխի ընկելու, որ իրանց երգի նման՝ վրացիների երգն ևս երգւած պրծած էր:

Եւ վրաստանից օգնութիւն ստանալու համար՝ նախապէս Ռուսաստանի բարեհաճութիւնն ու թոյլտուութիւնը պէտք էր ստանալ:

Եւ ահա նորից ասպարէզ է գալիս Յովսէփ Արղութեանը:

Նրա խորհրդով՝ հայ մեկիքներն ու իւզբաշիններն և նոյն իսկ Ղուկաս կաթողիկոսը՝ մի շրնորհաւորական ուղերձ գրեցին Պօղոս կայսին՝ նրա զահակալութեան առթիւ:

«Ի պատասխանի այդ ուղերձին Պօղոս կայսրը մի հրովարտակ տւեց (1798 թ. փետրւարի 26-ին), որով «իւր բարեհաճութիւնն էր յայտնում ամբողջ հայ ազգին և խոստանում էր ուշադրութիւն դարձնել նրա դրութեան վրայ»:

ԻԸ.

Յովսէփ Արղութեանի՝ Ղուկաս կաթողիկոսին և մեկիքներին տւած խորհուրդը և այդ խորհրդի հետեանքն եղող՝ Պօղոս կայսեր սոյն այս հրովարտակը այն քաղաքական նպատակն ունէր, որպէս զի թոյլ չտրւի հայերին խզել իրանց յարաբերութիւնը ոսնների հետ. որպէս զի նրանց սիրտը ոսներից չսառչի, որպէս զի քանի քանիցս անգամ յուսախաբ եղած հայ ժողովրդի մթազնած զիտակցութիւնը յանկարծ չզարթնի և նա ինքնուրոյնաբար իւր գլխի ճարը գտնելու այլ եղանակ մտածէ, թերևս պարսիկների մեծահոգութեանը ապաւինելով, թերևս նրանց հետ միանալով, թերևս վրացիներին ևս իրանց կողմը քաշելով և այն և այն:

Այս իսկ պատճառաւ Պետերբուրգի արքունիքը՝ չբաւականացաւ լոկ գրագրական յարաբերութեամբ, — այլ ուզեց, որ հայերը անձամբ և

ուղղակի յարաբերութիւն էլ ունենան արքունիքի իրան հետ:

Իսկ Պետերբուրգի արքունիքի այդ, և առհասարակ դրա նման, ցանկութիւններն ու յանձնարարութիւններն ի գլուխ բերելն՝ Յովսէփ Արղունթեանի վրայ, ինչպէս ասում են, չափւած ու ձեւած էր:

Ուստի հէնց որ Պօղոս կայսեր հրովարտակը ստացւեց՝ Յովսէփը հայերին դարձաւ մի այլ խորհրդով, — թող մեղքները կողմից մի պատգամաւորութիւն գնայ Պետերբուրգ և անձամբ իւր ցաւերն ու դարդերն կայսեր պատմելով նրանից շնորհ և ողորմութիւն հայցէ:

Եւ պատգամաւորութիւնը գնաց յանձին Վարանդայի մելիք Զոււշուտի և Գիւլատանի մելիք Փրեդօնի՝ մի քանի իւզբաշիններով:

Իթ.

Ներկայացան Պօղոս կայսեր և անձամբ անձին մատուցին իրանց ամենախոնարհագոյն, — всеуниженнейше խնդիրները:

Այդ խնդրագրերի մէջ մեղքները մի առ մի գրում են իրանց նախնիքների և իրանց կըրած տառապանքները պարսիկ կառավարութեան երեսից՝ յատկապէս ռուսաց կողմը հակւած լինելուն պատճառաւ: Պատմում են թէ ինչպէս Իբրահիմ խանը, ապա Ադա Մահմադ խանը իրանց կայքերն ու գոյքերը այրել, քար ու քանդ են արել, ինչ և սրբան խոշտանգանք են հասցրել իրանց ընտանիքին ու իրանց հպատակ ժո

ղովրդին, թէ ինչպէս է պատահել, որ իրանք մեծամեծ կաշառքներ տալով հազիւ կարողացել են իրանց անձը մահաւանից փրկել:

Վերջ ամենայնի կայսրից ահա ինչ են խնդրում:

ա) Ղարաբաղը ընդունելով ռուսական գահի հովանւոյն տակ՝ ճանաչել նրան սեփական ժառանգութիւն հայ մեղքներին, այլ ոչ Իբրահիմ խանին: Յարգելով այս խնդիրը՝ կայսրը առիթ և հնարաւորութիւն կուտայ՝ Ղարաբաղից ցրւած հայերին՝ նորից վերադառնալ և վերականգնել, շէնացնել իրանց հայրենիքը:

բ) Եթէ կայսրը այս խնդիրը չէ ուզում յարգել, — այն ժամանակ մեղքները նրանից 12 հազար զօրք են խնդրում, որպէս զի նրանց հովանաւորութեամբ կարողանան ցրւած հայերին հաւաքել և նրանց հետ միասին գաղթել Ռուսաստան և Եկատերինսօղարի մօտ հայկական մի նոր գաղութ հաստատեն, — մի նոր փոխ Զայուսան Ռուսաստանի մէջ»:

գ) Եթէ կայսրը այս խնդիրն ևս չյարգէ, — մեղքները խնդրում են, որ նա բարեհաճի վրաց թագաւորին հրամայել, որ սա հայերի համար տեղ տայ Ղազախ (հին Գուգարք) գաւառը, որտեղ հայերը հաստատւելով միևնոյն ժամանակ Վրաստանի սահմանները յարձակումներից կը պաշտպանեն:

Լ.

Մեղքների այս խնդրագրի հեղինակը կամ

Թելազորողը է նոյն ինքն Յովսէփ Արղութեանը, որ, ինչպէս երևում է, այժմ միայն համոզել էր, որ Արարատեան աշխարհում հայկական անկախ Հայաստան կազմելու միտքն՝ մի անցողական երազ էր: — Ուստի հայկական քաղաքագէտ Արհին այժմ համաձայն է, որ գոնէ Ռուսաստանում մի «նոր փոքր-Հայաստան» կազմւի:

Սակայն Պօղոս կայսեր՝ 1799 թւականի յունիսի 2-ին տւած հրովարտակը եկաւ ապացուցանելու, որ հայկական քաղաքագէտ Արհին այժմ ևս երազում է:

Յիշեալ հրովարտակով Պօղոս կայսրը յայտնում էր մելիքներին, ՚ի պատասխանի նրանց ամենախոնարհագոյն խնդրին, որ ինքը պատւիրել է վրաց թագաւորին, որ Ղազախ գաւառը, երբ բռնւած յէ, արւի մելիքներին, որ իրանց ժողովրդով այնտեղ ապրեն և Վրաստանի սահմանը պահպանեն:

Հէնց միայն այսքանս: Ուրիշ ոչինչ:

Եթէ չհաշուենք նրանց շնորհւած մեղաշնորհ և խոստացւած փոքրիկ քոչակներն, որոմով կայսրը կամենում էր հայ մելիքներին միշտ իւր ձեռքի տակին ունենալ:

Ճշմարիտ է կայսրը յիշեալ հրովարտակումը այս էլ է ասում, որ Ղարաբաղը նա համարում հայ մելիքների ժառանգական սեպհականութիւնը, բայց վերջերում, երբ Ղարաբաղը Ռուսաստանի հետ միացւեց՝ կայսերական այդ խոստումն ևս մոռացւեց: Հայ մելիքների ժառանգական ի-

րաւունքները մերժելով մերժեցան:

ԼՍ.

Մելիքներին արւած վերոյիշեալ հրովարտակից մի քանի ամիս անցած՝ Ղուկաս կաթողիկոսը վախճանեցաւ և նրան յաջորդ ընտրեցաւ, Յովսէփ Արղութեանը՝ թէ ինչ եղանակով, — ընթերցողն արդէն զիտէ իմ նախկին յօդւածներից:

Արղութեանին Արարատեան Մայր Աթոռի վրայ և սմենայն հայոց կաթողիկոս կարգել տալով՝ ուսև կառավարութիւնը Յովսէփի ցարդ մատուցած ծառայութիւններին փոխարինութիւն չէր ուզում անել, ոչ, ուսական գահոյքին ցարդ մատուցած այդ ծառայութիւնների համար՝ Յովսէփը արդէն անձնապէս բարձատրւած էր ամենայն առատաձեռնութեամբ:

Այդ առթիւ նա տէրութիւնից տժգոհ վնելու իրաւունք չունէր: Եւ տժգոհ էլ չէր:

Սակայն տէրութիւնը Յովսէփի կաթողիկոսութիւնից ուրիշ և նորանոր ակնկալութիւններ ունէր:


Եւ անա թէ ինչու համար էր, որ նորընտիր կոթողիկոսին Կովկաս բերին, ինչպէս իւր տեղում յիշել ենք, չտեսնւած շուքով ու հանգիստաւորութեամբ:

Կովկասի կառավարչապետ Կնօրինգը ինքը անձամբ մինչև Մոզդոկ գնաց Նորին Վեհափառութեանը դիմաւորելու:

Կովկասեան լեռնականներից պատանդներ վերցւեցան, որպէս զի կաթողիկոսը ամենայն ապահովութեամբ լեռնաշղթան անց կենայ:

Իսկ նրա մուտքը ՚ի Թիֆլիզ՝ թնդանօթնե-







6889